

Ապա թէ ոչ — այս ինքն եթէ նուազ ջանք եւ արդիւնք եղած է — դէթ 1878 ներկայ թուականում եւ հետագաներում աւելի եւս այսպիսի նախամեծարելի նպատակով եւ ըզձիւք պէտք է ուխտել: Կարեւոր միջոցները հոգալ եւ արդիւնաւորել:

Յուրեւ անցեալ տարի ինչպէս որ կարեւոր էր՝ ակնարկեալ կրթութեան եւ պատրաստութեանց համար ոչ այնքան ջանքեր եղած լինին՝ որքան կրօնական գիմնականութիւններով պատրաստեալ տարօրինակ եւ հրապուրիչ գործողութիւնք եղած են, որոց համար ի հարկէ գործիքներ չէին տրակասեր եւ ոմանք երազայոյս առաջնորդներ ձեռնալ կրնային սիրել: մինչդեռ հարազատ Հայոց համար աւելի կարեւոր եւ պէտք է անցեալէն փորձեր եւ հրահանգից խրատներ ստանալ, Հայ ազգութեան եւ Հայաստանեայց եկեղեցւոյ սիրով զգացմամբ եւ ոգւով պէտք է պատրաստել եւ ոգեւորել Հայկական սերունդը կամ ազգը եւ այնպէս յուսալ՝ որ ոչ միայն անցեալ տարիները եւ ներկայ 1878 թուականը, այլ եւ յաջորդները միշտ Հայոց համար շնորհաւոր բարի եւ բարեխիշատակ լինին՝ թէ եւ նոցա մէջ աղէտայի անցքեր եւ սրտամկիկ տեսարաններ եւս կրնան պատահած լինել կամ պատահել: սակայն Հայ քաւելի ի՞նչ կարող են անել եւ ուրիշ կերպ եւ ո՞ւմ հետ կրնան մրցիլ, եթէ ոչ՝ յաւէտ արուեստից եւ վաճառականութեան հետեւելով, կրօնական վսեմ զգացմամբք առաքինանալով եւ ճոխանալով, մտաց եւ բարուց գովելի եւ գեղեցիկ լոյս եւ սնունդ տալով, միանգամայն Հայոց ազ-

գը եւ եկեղեցին ըստ նխթականին եւ ըստ բարոյականին երջանիկ մի վիճակում փառաւորելով, եւ այսպէս միայն եւ միշտ փառաւոր մի ազագայի յոյս տածելով եւ առաջնորդելով, որ շատ դժուար չէ՝ եթէ խաբուսիկ խլրատումներէ եւ գիմնականոր անձինքներէ զգոյշ մնալով՝ սիրով եւ միաբանութեամբ՝ անկեղծ ջանիք եւ յարատեւ նախանձախնդրութեամբք հետեւիք եւ գուն գործեմք յաւէտ եւ մի միայն ի պայծառութիւն եւ ի բարգաւաճանս Հայաստանեայց Ազգի եւ եկեղեցւոյ՝ նոցա հարազատ եւ անձնանուէր որդիք եւ անդամներ լինելով, որոց մէջ գտնուելիս եւ մի խոնարհ պաշտօնեայ եւ գործակից լինելը յաւէտ եւ ինձ սիրելի միանգամայն պարծանք կհամարիմ:

Վ. Ե. Մ.

---

Կռապաշտական դարուն մէջ Քրիստոսի աշխարհք գալէն յառաջ երբ որ բնատուր հանձարաւոր անձանց փորձառական հմտութեամբք գիտութիւնները ծաղկեցան, եւ իմաստասէրք գանազան իրանց եւ տիեզերքիս վրայեօք քննութիւններ անել սկսան, եղան ոմանք որ տիեզերքի այսպիսի գեղեցիկ կարգադրութեամբ կառավարելը տեսնելով, նորա գոյացնեցանօղ եւ կառավարողը իմանալ ուզեցին:

Աւելի խորիմաց բանագէտները սահմանեցին, թէ աշխարհքս ինքնագոյ է ոմանք ալ թէ մանրամազ փոշիներէ

